ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

17 նոյեմբերի 2026թ. **N 691-Ա**

ՈՐՈՇՈՒՄ
«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ «ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԻՎ 22 ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 19-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչ Զապել Եսայանի անվամբ՝ «Զապել Եսայանի անվան գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 17
Երևան

Կազմված է «.....»..... 2026թ.
Բաղկացած է ընդամենը 2 էջից

ՀԱՍՏԱՎԱԾ Է՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«17» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թ. Ն 691-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ 19.02.2004թ.
գրանցման համար 290.210.03008
ՀՎՀՀ՝ 01821596
24.10.2011 թվականին գրանցված կանոնադրության
թիվ ..... փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձնանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից
«.....»..... 2026թ.

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ «ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԻՎ 22 ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

2026թ.

«ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում և 1.1 կետում «Հայաստանի Հանրապետության Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի N22 գրադարան» բառերը փոխարինել «Զապել Եսայանի անվան գրադարան» բառերով:

2. Կանոնադրության 1.10 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.10 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Զապել Եսայանի անվան գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Զապել Եսայանի անվան գրադարան» ՀՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ «Библиотека имени Забел Есаян» общинная некоммерческая организация,

ռուսերեն կրճատ՝ «Библиотека имени Забел Есаян» ОНКО,

անգլերեն լրիվ՝ «Library named after Zabel Esayan» Community Non-Commercial Organization,

անգլերեն կրճատ «Library named after Zabel Esayan» CNCO:

3. Սույն փոփոխությունը հանդիսանում է 24.10.2011թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված «ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: